

մենք համարել էինք vand հնագոյն ձեւը gund բառի «տուն, բնակութիւն» իմաստով: Նաեւ համեմատել էինք Խուժիստանի մի քաղաքի անուան հետ, որ է Գունդի-շապուհ, կամ աւելի հին ձեւը՝ վանդի-շապուհ, որ յիշում է մի յոյն հեղինակ՝ Bendo-sabor-on:

Պ. Խաչատրեան այս առթիւ լեզուագիտական խրատներ է կարդում, որ Բազրատւանդ չի կարող դառնալ Բազրաւանդ: Քնն՞ւ: Ահա havantsara դառնում է՝ հաւասար, եւ vardat-gesa վարդ-գէս:

Արգոյ պարոնի առարկութեամբ gand տուն չէ նշանակում: Քրդերի մէջ ապրած մարդ է եւ կարելի էր սպասել, որ գիտենար, որ քրդերէն gund նշանակում է գիւղ:

Բերում է նաեւ Մարքուարտի մեկնութիւնը, թէ վեդդի-Մարտը ծագում է վեհ-Անտիոկ-Սապուր անունից եւ հետեւապէս աղերս չունի մեր ենթագրած վանդ — գունդ բառի հետ: Եւ այստեղ լուկ իր անձանօթութիւնն է ցուցադրում:

Անդամ մեր կոչումը ստուգելու նեղութիւնը չի քաշել պ. Խաչատրեան, ապա թէ ոչ ցոյց տուած տեղում կը տեսնէր, որ Մարքուարտի կարծիքը նորութիւն չէ եւ ոչ իսկութիւն, այլ նա ծագում է արար հեղինակներից եւ յայտնի արեւելագէտ Նեոլդրքէ անարժէք է համարում եւ փորձում է այլ կերպ մեկնել: Այսպիսի պայմաններում ներելի է եւ ոչ անգոսնելի կցել խնդիրին նաեւ գունդ — գիւղ,

բնակութիւն բառը, քանի որ ոմանք Գունդի-շապուհի մէջ պատրաստ են տեսնել մինչեւ անկամ գունդ — զօրք, բանակ բառը, որ նուազ պատշաճաւոր է քան մեր առաջարկը:

Մարքուարտ կարծում է նաեւ, որ յիշեալ քաղաքի անունը վեհ-ադ-Անտոկ-շապուհ չէ եղել, ինչպէս արար մատենագիրներն են գրում, այլ վեհ-Անտոկ-շապուհ:

Նեոլդրքէ, որ չի ընդունում այս ստուգարանութիւնը, ինչպէս ասացինք, նոյն ուղղումը առաջարկում է մի ուրիշ քաղաքի անունն առթիւ:

Պոսրով Անուշըրուան Անտիոքի բնակիչներին զաղթեցրեց եւ հաստատեց Տիգրոնի մօտ հիմնած նոր քաղաքում, որ կոչեց վեհ-ադ-Անտոկ-Պոսրով:

Ահա այս անունն է, որ նա ուղղում է վեհ-Անտոկ-Պոսրով:

Աբէնոս պատմագիրը ծանօթ է այս քաղաքին, որ անուանում է վեհ-Անջաթոք-Պոսրով: Նոյն գիտնականը ուղղում է հայ անունն եւս ուղղել վեհ-Անտոք-խոսրով:

Կարծում ենք, որ այս առաջարկը վիճելի է:

Աբէնոսի վեհ-Անջատոքը հաստատում է արար մատենագիրների վկայութիւնը, որ քաղաքի անունն իրօք եղել է վեհ-ադ-Անտոք, հայ Անջատոք ազաւազումն է կամ Ադ-Անտոքի կամ աւելի հին ձեւի՝ Աթ-Անտոքի:

